

ԱՐՈՒԵՍՏ ՀՐԱՀԱՆԳՈՒԹԵԱՆ ՄՈՒՆԶ-ԽԼԻՑ.

Պատասխանութիւն, կրթութիւն. երկու նուիրական սրտաձառոյ բառեր որ կը պարտին շարունակ ամենուն բերանը փափաքանօք ու մեծարանօք, և իբրեւ դեղ մը կը համարուին. ընկերական հիւանդութեանց, Սակսյն որչափ ալ մեր օրերը աւտոնց անունն ու ազդեցութիւնը մեծ և ընդհանուր է, եղաւ ժամանակ՝ որ ընկերութիւնն ամենեւին փոյթ չտարաւ աւտոնց. իր անկատար ու պակասաւոր որդիքը կը խեղդէր, ծերերը կը սպաննէր՝ իբրեւ անօգուտ աշխարհի, և կուրերն ու մունջ-խուլերն անխնամ կը թողուր, որ տեւեց գծախտաբար երկար դարեր. անակ որ եթէ վերջին դարուց ողջամիտ իմաստասիրութիւնն լոյս մը չտար մեզի մունջ-խլից վրայ, անշուշտ պիտի համարէինք զանոնք մինչև հիւսմ հնոց պէս 'ի բնութենէ ձգեալ էակներ, անբուականք ընդունելու ինչ և է կրթութիւն. վասն զի բոլոր իմաստասէրք առաջին ժամանակաց մինչև ցԺՁ դար, կը համարէին զանոնք իբրեւ յերկնից հարուածեալ հրէշներ, էակք պարզապէս բուսականք 'ի մէջ մարդկան, քարոզելով ծնողաց թէ ըստ բաւականի կը լնուն պարտքերնին՝ եթէ ընկոյն անոնց կեանքը պահէն ¹ ։ Ուստի ընկերութեան այս վատաբախտ մասը, երեսէ ձգուած մնաց երկար դարեր, թէ և ունէր զօրաւոր միտք և զգայուն սիրտ :

Բայց թէպէտ վերջին դարուցս մէջ վերացաւ ընկերութեան մէջ տիրած այս հինօրեայ խռլըր նախապաշարմունքը, բայց ոչ անհիտադաւ բողոքովին։ Սնցեալ դարուն սակաւաթիւ կրթիչք, թէ և ձեռն արկին 'ի կրթութիւն մունջ-խլից, և լաւ իմացան թէ ինչպիսի բարձրագոյն կրթութիւն կըրնան ստանալ մունջ-խուլերն, սակայն զօչոտեալք գործոյն յաղողութենէն, բարձրա-

մտութեամբ իբեքք դիրենք մէկ մէկ Պրոմիթէս կաշեցին, հաստատելով թէ մունջ-խուլը կրթելն ուրիշ բան չէ բայց եթէ նոր հոգի տալ անոր :

Բայց ինչ պատճառաւ արդեօք այնչափ ժամանակ սխալման մէջ մնացին այնչափ և այնպիսի երեւելի մարդիկ, մունջ-խլից բարոյական վիճակին վրայ։ Սոր պատճառը բնական նախապաշարում մ'էր, որոյ մէջ կ'ընկնանք քիչ շատ ամենքս ալ։ Այն վայրկեանի յորում՝ քաղաքական զարմանալի յառաջադիմութեամբ մ'ուսաւ մարդկային ընկերութիւնը զգործածութիւն այբուբենական գրութեան, յայնժամ խօսուած լեզուներն միջոց մ'նշան յարաբերութեան մարդկան ընդ միմեանս և նախնական կրթութեան. միջոց՝ որուն ստորակարգեցան ալք. և ահա ասով լսելիաց գործաբանն եղաւ միակ գործի յարաբերութեան մարդկանց իրարու հետ և կրթութեան։ Իսկ արդ տղան առանց տրուեստի 'ի ծննդենէ բառից միջոցաւ միայն կ'ուսանի մայրենի լեզուն, հետեանք պարագային յորում կը գտնուի, ասկէց հետեւոցին թէ որովհետեւ ականջն է գործի՝ և խօսքն է միջոց հաղորդելու մտաց զգալաւորաւ, ուրեմն զուրկ ըլլալով մունջ-խուլն այս միջոցներէն, չէր կրնար կերպով մը հրահանգութիւն ընդունել։ Մինչդեռ մունջ-խլից ոչ սակաւ ծրինակներն որ 'ի վաղեմի ժամանակս նշան տուին ոչ աննշան բանավարութեան, ինչպէս նաեւ գրաւոր ու բարոյական զարգացման, պէտք էր զարթուցանել իմաստասիրաց մտադրութիւնը, և ստիպել զանոնք աւելի ևս փնտռելու այս զարուստգութեան պատճառը, և փոխանակ արտաքին երեւութիւմ գոհ ըլլալով՝ 'ի խորս թափանցել, Գիտնալու էին որ մունջ-խուլն թէպէտ զուրկ է յերկուց զգայարանաց, սակայն ունի այլոց պէս բանական կարողութիւն, մտադրութիւն, անդրադարձութիւն, երկակայութիւն, դատողութիւն և յիշողութիւն։ Եւ թէպէտ խօսելիք ու լսելիք ունողաց պէս չի կրնար յարատեւ օգնակաւորութիւն մ'ընդունել յայլոց, և բռնազա-

¹ Արխատուէ անընդունակ կարծելով զայնք ինչ և է կրթութեան, գողցես սարին կը գանք. քան զանասունս։ — Հաղովմական օրէնք յետ Յուսաւնիւմնոսի, կը մերժէին մունջ-խուլերն քաղաքակցութեան իրաւունքէն, համարելով զուրկ 'ի բանավարութենէն։

տեալ է խորհրդակցել միայն իր ուժոյն և միջոցաց հետ. և մինչդեռ կը կրթութիւն այլք՝ խօսից, պարտաւե և իրաւանց միջոցաւ, ինչպէս նաև յառաջիկայ իրաց և 'ի փորձոյ ծնողաց, մունջ-խուլն իր անկատարութեանը պատճառաւ դատապարտեալ է անգիտանալ զայս ամենայն, և ստիպեալ միշտ յինքն փրնտուել իրաց պատճառը. ուրով մինչդեռ անոնք որ ունին խօսելիք ու լսելիք՝ այլոց պարտական են իրենց ծանօթութեան մեծագոյն մասը, մունջ-խուլն ամենեւին չէ ումեք պարտական: Ուրեմն մունջ-խուլն ոչ միայն բուսական էակ չէ, ինչպէս կ'անուանէին փիլիսոփայք, այլ և ընդունակ ինչ և է կրթութեան, որ յայտնի պիտի տեսնուի պարզելով հօս 'ի սկզբանէ 'ի վեր պիտի արուեստին բրած զարգացումը ու զարմանալիքը:

Մունջ-խից հրահանգութեան արուեստին սկզբնաւորութիւնը կորսուած ըլլալով ժամանակաց մթութեան մէջ, դժուարին է ստոյգ ժամանակ սահմանել. բայց առաջինն առաջմը անոր վրայ տեսական սկզբունք մ'աւանդողն որուն վրայ կը յենու այժմեան մունջ-խից հրահանգութեան արուեստը՝ եղած է Հերոնիմոս Փարտանոյ անուն իտալացի իմաստասէրը, և արուեստին առաջին խանձարուրքն ալ իսպաիլ քաղաքը: Փարտանոյ՝ եռանդուն հոգի և զօրաւոր երեակայութիւն մ'ունենալուն, կրցաւ միջամուխ ըլլալ իրաց բնութեանը, և ազատեց մունջ-խուլները արիստոտէլեան վճռէն: Սոյն անձը միացնելով զհոգեբանութիւն և զկազմագիտութիւն իրարու հետ, և պարապելով մասնաւորապէս զգայարանաց վրայ, կրնանք, կ'ըսէ, մունջ-խուլներն այնպիսի վիճակի մէջ գնել՝ որ լսին կարգացածինն ու խօսին գրածինն: Կ'ըսմբունեն մտքը, օրինակի աղաղաւ, որ հաց բառը, ինչպէս որ գրուած է, կը նշանակէ այն անորկայն՝ որ իր ցուցովն իրենց մի և նոյն ժամանակ. յիշողութեամբ և կ'ապշեն միտքերնին անոր նշանակութիւնը, և կը խորհրդածեն առարկային և անոր պատկերին վրայ: Ինչպէս որ նկարիչ մը տեսած պատկերին յիշատակսւ կրնայ անոր նման ուրիշ մը նկարել, նոյնպէս կարելի է մտադրութիւնն զրի վրայ աւելուլ: Եւ զարձեալ ինչպէս որ մարդկային բերնէ ելած զանազան ձայներն ըստ որոշեալ նշանաց սահմանեալ նշանակութիւն մը կ'ընդունին,

նոյնպէս զանազան տառք 'ի զիր անցեալք, կրնան ունենալ նման զօրութիւն: Գրութիւնն կը միանայ բառից հետ, և բառից միջոցաւ մտածութեանն հետ. բայց կրնայ նոյնպէս մտղալիկ ներկայացնել մտածութիւն մ'առանց միջնորդութեան բառից. որուն ստուգութեանը վկայեն մեհնեալ դրով՝ գրութիւնք, որոց տառերն բոլորովին գաղափարական են: Մունջ-խուլներն կը ճանչնան ու կը պատուեն զՍտուած, վասն զի ունին բանաւոր հոգի. ուստի չկայ պատճառ որ չկարենան պարապել 'ի մտաւոր և 'ի գործնական արուեստս:

Փարտանոյ առանց գործնականին իջնելու՝ մեծ լոյս մը տարածելով այս նիւթին վրայ, թողուց որ ուրիշներն 'ի գործ գնեն իր սկզբունքները: Եւ ահա իրմէն քիչ ժամանակ ետքը փայլեցաւ Պետրոս տը Բոնս անուն սպանիացի բենեդիկտեան կրօնաւորը, որ սկիզբն տուաւ մունջ-խից գործնական կրթութեան արուեստին վիշտասաներորդ դարուն կիսուն: Կը պատմեն թէ այն վանքին մէջ յորում կը բնակէր այս մեծանուն կրօնաւորը, աշխատաւոր մունջ-խուլ եղբայր մը կար, որուն կրթութեան հոգն իրեն յանձնուած ըլլալով, գտաւ զանկա խօսեցնելու եղանակը: Պետրոս տը Բոնս ամեն բանէ առաջ գրել կը սորվեցըներ, ցուցնելով մատովն այն առարկայքը՝ որ գրուած տառերը կը նշանակէին. և ապա նոյն բառերն ըստ կարի հնչել կուտար, և այս կերպով՝ որ գուցէ անհաւատալի թուի, մունջ-խից խօսիլ կը սորվեցըներ կատարելապէս. և աւելի զարմանալին այն է՝ որ բոլոր իր աշակերտներն մունջ-խուլ կը մնային առջինին պէս, բայց կը խօսէին, կը գրէին և կը տրամաբանէին իբրեւ թէ թերութիւն մը չունենային:

Ահաւասիկ ասոնք են վերջին դարուց մէջ փայլող երեւելի անձինքն, որ պարապեցան այս կարեւոր նիւթին վրայ. այլ իրենցմէ ետքը երեւցան ուրիշներ ալ, և շատ մը մասնաւոր կրթարաններ հաստատուեցան ու կը հաստատուին մինչև ցայսօր, զորոնք զանա առնելով որ մեր նպատակէն դուրս է, անցնինք մունջ-խից կրթութեան ներկայ արուեստին վրայ:

Գիտենք որ սովորաբար մէկը ուրիշ պատճառաւ մունջ չէ, եթէ ոչ վասն զի խուլ է. ուստի ընդունայն է բռնադատել զայնպիսին բռնա միջոցներով լսելու կա-

րողութիւն ստանալով՝ ուսկից զուրկ է դրժ-
րախտաբար 'ի ծնէ, մինչդեռ անոր տեղ
կարելի է տեսանկեօք տալ այն ծանօթու-
թիւնքն զորս լսելեօք պիտի ունենար. և
այս հնարքը կամ միջոցը բնութիւնն իսկ կը
ստրվեցնէ մեզի: Կը տեսնանք որ մունջ-
խուլներն մեծ յաջողութիւն ու կարողու-
թիւն մ'ունին ընդունելու դիրութեամբ
բոլոր այն հրահանգներն որ կը տրուի ի-
րենց 'ի ձեռն տեսանելեաց, որ բաւական
է ընու բոլոր լսելեաց թելութիւնքը. տե-
սանելեօք ուրեմն հրահանգները դիրենք,
փոխանակելով ձայնի զտառան, որոնք ի-
րենց ձեռքն կրնան մեկնել զամենայն:

Այս վախճանին հասնելու համար երկու
միջոց կայ. Հելուսն արուեստական և Այրու-
քին ձեռնական: Առաջինով կը հրահանգեն
մունջ-խուլները շարժելու լեզուին, ատա-
մունքներն ու շրթունքներն այնպիսի գրիւք՝ ու-
րով կարենան արտաբերել առաւել կամ
նուազ իւրաքանչիւր տառից ձայնը. իսկ
ձեռնական այբուբենը որ արդէն ծանօթ էր
հնոց, շատ աւելի պարզ ու գիւրին է 'ի
գործածութեան, և կը կայանայ փոխանակ
տառից՝ մատանց զանազան ձևերով պար-
զել խօսքը. և այս վախճանին հասնելու
համար, պէտք է մտցնել նախ զմունջ-
խուլը դպրոց մը, և ցուցնել ուրիշ տը-
ղոց ըրածը որոնք կը սորվին զԱ. Բ. Գ. և
երբ տեսնանք որ նա համ'ի՛տանու այդ կըր-
թութենէն, ցուցնել իրեն Այբբերարան
մը, յորում իւրաքանչիւր տառից քով դը-
րուած ըլլայ ձեռք մ'ալ, որ մատերովն ա-
մեն տառից որոշեալ ձևն ընէ: Այս այբ-
բենարանը լաւ մը քննելէն ետքը՝ ջանայ
գրել, օրինակի աղաղաւ՝ Ա տառը, և ա-
պա հարցընել իրեն անոր մատնանիչ ձևն,
որպէս զի իմացուի թէ ըմբռնեց արդեօք,
կամ ջնջել տառը և ցուցնել տալ մատով
անոր ձևը: Այս կերպէն շատ կ'օգնէ մունջ-
խիւն մտացը, որ որչափ ալ ծանրամիտ ըլ-
լայ, կը տեսնանք որ քիչ օրուան մէջ ամ-
բողջ կ'ուսանի զայն:

Այս ընելէն ետքը, սկսելու է ցուցնել
մունջ-խիւն զանազան առարկաներ՝ նշանե-
լով իւրաքանչիւրին քով իրեն յատուկ ա-
նունը. և ապա ջնջել զայն և նոյն անուամբ
ցուցնել տալ առարկայն և կամ փոխա-
դարձ. և այսպէս աստիճանաբար կը սորվի
մունջ-խուլն գատելով՝ որ իւրաքանչիւր առ-
արկայ տառից տարբեր բաղկացութեամբ

կը կոչուի, և այսպէս տղոց նման կ'ուսանի
մեքենաբար առարկայից անունը. և եթէ
ժամանակն ու պարագայք կրնան թոթո-
վախստ տղան խօսուն ու տրամաբան ը-
նել՝ ըստ չափոյ հանճարոյն, փորձառու-
թեան և կամայն, ինչու նոյնը պիտի չըլ-
լայ և մունջ-խիւն:

Եւ որպէս զի առարկայից անուններն
անջնջելի տպաւորութիւն մունջ-խիւն մտացը
մէջ, կենաց ամենակարեւոր իրաց անուն-
ներն սորվեցնելէն ետքը, պէտք չէ բուն մը
տալ իրեն, մինչև որ յատուկ անուամբ չի
խնդրէ. իսկ թէ որ չկարենայ խնդրել կա-
րեւորն, տալու ենք զայն, միշտ անունը քո-
վը նշանակելով:

Պէտք է մտադիր ըլլան դարձեալ կըր-
թիչք թէ ինչպիսի շարժմամբ կը բացատրէ
մունջ-խուլն առարկայի մը բարի կամ չար
յատկութիւնները, ատելութեան կամ սի-
րոյ զգացոյ միւսը, հաւանութեան կամ ան-
հաւանութեան, սարսկուսանաց ու փա-
սիաբանաց կերպերը, անցելոյն, ներկայիւն
և հանդերձելոյն մտածութիւնքը՝ որ կ'ա-
րարերին գաղափարաց, զգացողութեանց,
կրից ու դատմանց, և գործածէ զանոնք ի-
բրեւ օգնական՝ կերպաւորելու առարկայից
անունները, որով օգնել կերպով մը յըմ-
բռնումն այն գաղափարաց՝ որոց պէտք
ունի մունջ-խուլին: Ուստի հարկ է որ իրենք
ալ սորվին ձեռնական այբուբենը անոնց
հետ խօսակցելու համար. և երկրորդ, որ-
պէս զի եթէ սխալին՝ ուղղեն, և ցուցնեն
գրեանց վրայ այն տառերն՝ զորս կը հնչեն
ու կը կերպարանեն մատերով, Գլխաւոր և
առաջին դիտելու բաներէն մէկն ալ այն է՝
որ այս կրթութիւնքս 'ի տղայ հասակէն
սկսուին, վասն զի փորձով տեսնուած է,
ինչպէս բնական ալ է, որ յառաջացեալ
հասակի մէջ սոյնայն աշխատանաց տը-
ղիւնքն ոչինչ է. մինչդեռ մատաղ հասակի
մէջ աշխատութիւնն նուազ և արդիւնքն
ալ մեծ կ'ըլլայ:

Տարակոյս չկայ որ այս ամեն բաներն
ունին իրենց դժուարութիւնքն և ձանձրու-
թեան առիթները, անոր համար մեծ զոչ և
համբերութիւն կը պահանջուի 'ի հրահանգ-
չաց, և կը տեսնան որ քիչ ատենէն աշխա-
տութիւնն իւրապատիկ արգասեօք կը
պսակուի: Մունջ-խուլն անգգայ չէ իրեն
միայ եղած աշխատանաց. ինքն ալ իւր կող-
մանէն ամեն ջանքն կը թափէ. և հազիւ թէ

ձեռնհաս ըլլայ ըմբռնել գաղափար մը, անհաւատալի սիրով ու եռանդեամբ կ'աշխատի անոր վրայ մտօք, գործի ընելով զայն ընդարձակ կրթութիւնաց:

Երջանիկ ու գովկիկ է Եւրոպայ որ կը հոգայ վեհանձն ու մարդասէր հոգեով ընկերութեան ու մարդկութեան այս կարեւոր պէտքերը: Չկայ Եւրոպայի մէջ ազգ մը, չըսեմ արժանաւոր քաղաք՝ որ չունենայ բաց ի զանազան բարեկարգ մարդասիրական ընկերութիւններէ, նաև մունջ-խլից համար մասնաւոր դպրոցներ: Երանի թէ կարենայինք նոյնը ըսել Արևելից և մերձաւորապէս մեր ազգին ու մեր հայրենեաց համար. ո՞ր է մեր աղքատանոցն, ո՞ր ծերանոցն, ո՞ր կուրից ապաստանարանն, ո՞ր մունջ-խլից դպրոցն, ո՞ր բարեկարգ հիւանդանոցն, Վասն զի եթէ ան-

հնարին է որ ամեն աղք ու ընկերութիւն չունենայ իր պակասաւոր անդամները, ապա ուրեմն նոյն ազգին կամ ընկերութեան ներկայացուցչաց կ'ընկնայ զանոնք հոգալու պարտքը. գիտնալու ենք որ աղքի մը բարոյական ու նիւթական յառաջադիմութեան նշաններէն մէկն ալ այս տեսակ կարգադրութեանց յաճախութիւնն ու կարգաւորութիւնն է: Չանան ուրեմն ներկայացուցիչք ազգիս, թէ որ անոր յառաջադիմութիւնն ու երջանկութիւնն է ստոյգ նըպատակին, ի հաստատութիւն այսպիսի անհրաժեշտ կարեւոր կրթարանաց. ժողովեն հօն մեր հայրենեաց բարոյապէս կամ նիւթապէս կարօտ ու պակասաւոր անձինքը, և կ'ունենանք այն ատեն հիմակունէն աւելի երջանիկ ու մխթարական օրեր:

Զ ԱՆ Ա Զ ԱՆ Գ Ի Տ Տ Լ Ի Փ

Ջրհոր բաճարու եոր մեքենայ. — Սմերկ-կացի գիտնական մը վերջերս նոր հանաւրիկ կերպ մը հնարեց ջրհոր փորելու, ուրուն փորձն ըրին զանազան կողմեր և յաւիտեցան: Պատրաստութիւնն կը բաղկանայ պտուտակով իրարու վրայ ագուցած զանազան երկաթէ խողովակներէ, որոնք ըստ փորվի խորութեան առ որ կ'ողկնէր հասնի՝ երթալով կը բազմապատկին: Այս խողովակաց առաջինը, այն՝ որ սահմանալ է երկիրը փորելու, վերջին ծայրին վրայ պողպատէ սուր կէտ մ'ունի, և կայ վրան շատ մը փոքրիկ ծակեր՝ ուսկից ներս կը թափանցէ ջուրը:

Գրեթէ քառասուն քիլոկրամի ծանրութեան կ'աւելնայ յաշորդաբար իւրաքանչիւր խողովակաց վրայ, և այս միջոցաւ դիւրութեամբ կը մղուին հողոյն տակ: Երբ կը համարին թէ խողովակն հասած է աղբեր կամ ջրոյ երակի մը, պզտի ջրհան մը կը հաստատեն, և յայնժամ եթէ կայ ջուր՝ ի վեր կը բարձրանայ ի ձեռն ջրհանին: Գեղեցիկ դիւտ, ծախքն արժան, ամենապարզ ու ամենադիւրին:

Այս մեքենայիս հնարողն ծախած ըլլալով իր գիւտն Պ. Նորգոնի Եւրոպացոյ, Նաբուէն Գ. իր իշխանութեան վերջին ամաց մէջ, Բարիդ կանչեց նոյն անձը, և զնացին մէկտեղ ի Սէն-Փիլ ուր այս գրութեան փորձն եղաւ առաջի կայսեր: Ջրհորն փորուեցաւ կէս ժամու մէջ, տալով ի

վայրկենի քսան լիտր ջուր, որ տեւեց անընդատ քանի մը ժամ: Այս ջուրն թէպէտ ամեն տեղ ու ամեն առթիւ մէջ կ'ընայ գործածուի, բայց աւելի ի պատմութեամբ երբ շուտ ու առատ ջրոյ պէտք ունենան:

Նոր գործի սխալ դրամները ձանկարու: — Պ. Նաբիէ նոր գործի կամ կ'ընէ մը հնարեց մէկէն և անմիջապէս ձանկարու սխալ դրամները, որ պարզ է, տեւական և դիւրին ի գործածել: Սեղանաւոր կ'առնու ու կը ձգէ հաշուարանին վրայ ոսկւոյ կտորն. երբ պակաս գտնէ կշիւր, կը սարտաւորէ դտէրը որ հօն ներկայ է, հատուցանել պակասը, և երբեմն ալ կ'արգելու մասամբ մ'այն անհամար սխալ դրամոց չըջանն, յորս զգալի նուազեցուցած են խաբէութեամբ ոսկւոյն կշիւր, օտար նիւթն խառնելով մէջը: Կ'ըսեն թէ այս կշիւն շատ կը տարբերի իր զգայականութեամբն սեղանաւորաց մինչև հիմա գործածած կշիւն, զորս դարձեալ նոյն ինքն Նաբիէ հնարած է: Գործին շատ մեծ չէ, հազիւ ութ թիւաչափ տեղ կը գրաւէ. և զարմանալին այն է որ կշիւն չեղման աստիճանը ելեկարութեամբ կ'իմացուի, և սովորաբար վայրկեանի մէջ կ'անցընէ ընդ փորձ վաթսուոն կտոր ոսկւոյ. չունինք տարակոյտ որ այս գործին մեծապէս օգտակար պիտի ըլլայ բոլոր սեղանաւորաց ու տէրութեանց: